

# ՏԽՈՒՐ, ՇԱՏ ՏԽՈՒՐ ՏԱՐԵԴԱՐՁ ՄԸ

ՀԱՅԿ ԱԿԳԱՇԵԱԼՆ

Հինգ տարի առաջ, Մարտ 16, 2004ին, առնուեցաւ չարագուշակ որոշում մը՝ Յունիս 2005ին Սելզոնեան Կրթական Հաստատութիւնը փակելու:

Արդարացո՞ւմը...:

ՀԲԸ Միութեան Կեդրոնական Վարչութեան կողմէ տրուած բացատրութիւնը այն էր, որ Սելզոնեանը չէր կատարեր իր առաքելութիւնը, հետեւաբար, չէր արդարացներ իր գոյութիւնը: Այս արարքով երկու հիմնական նպատակներ կը հետապնդուին. առաջին՝ ՄԿՀ փոխարինել՝ առաքելութիւնը կատարելու ատակ ուրիշ կրթական հաստատութիւններով եւ երկրորդ՝ Սելզոնեան կալուածը ծախել, կեդրոնական վարչութեան տրամադրութեան տակ գտնուած հարիւրաւոր միլիոն տոլարներու գումարը աւելի ճոխացնելու համար:

Արդ, փորձենք գիտնալ թէ վերոյիշեալ երկու նպատակներուն մէջ որքան յաջողեցաւ այս որոշումը առնող ՀԲԸՄ ներկայ ղեկավարութիւնը:

Որքան որ գիտենք առաջին նպատակին համար կատարուեցան երկու նախաձեռնութիւններ՝ մին Լոս Անճելոսի մէջ, միւսը՝ նման հաստատութիւն մըն ալ Հայաստանի մէջ հիմնելու, բայց չփորձեցին անհրաժեշտ սրբագրութիւնները կատարելով ետ իր առաքելութեան վրայ դնել հաստատութիւնը, եթէ ընդունինք որ ճիշդ էր իրենց փաստաճանաչումը:

Ոչ միայն մելզոնեանցիները, այլ համայն հայութիւնը կ'ուզէ գիտնալ թէ որքանո՞վ իրականացան այդ նպատակները եւ ի՞նչ արդիւնք տուին: Իսկ երկրորդ նպատակին ձախողութիւնը հանրայայտ է, նկատելով որ Սելզոնեանը ծախելու արգելք հանդիսացաւ կիպրական կառավարութիւնը, այն արդարացումով որ ՄԿՀ համակիպրական ազգային հարստութիւն է: Եւ այժմ հաստատութեան շէնքերը, անշուշտ բարեսիրաբար (չըսու համար իբր կաշառք), ՀԲԸ Միութեան կողմէ տրամադրուած են Կիպրոսի Կրթութեան եւ մշակոյթի նախարարութեան, որ զայն կ'օգտագործէ իբրեւ յունական դպրոց, մինչ մեր երջանկայիշատակ բարերարները զայն հիմներ էին Ցեղասպանութենէն ազատած հայ որբերու իբրեւ կրթարանապատանատուն:

Այս գոյգ ձախողութիւններէն յետոյ կայ նաեւ կտակին խախտումը, որ թէ օրինական եւ թէ համազգային շահերու տեսակէտով անընդունելի ու դատապարտելի է: Տակաւին կան նաեւ անչափելի խորունկ վնասներ, որոնք վարկաբեկեցին ու դեռ պիտի շարունակեն վարկաբեկել մեր սիրելի միութիւնը՝ իր ներկայ ղեկավարութեան առած որոշումին պատճառով: Եւ եթէ տակաւին ՀԲԸ Միութեան հաւատարիմ անդամներ ու համակիրներ կը շարունակեն իրենց աշխատանքը՝ ներկայ ղեկավարները խաբկանքը թող չունենան, թէ անոնց նուիրումը որեւէ ձեւով առնչուած է իրենց հանդէպ անձնական յարգանքի ու հաւատարմութեան: Միութեան հանդէպ սէրն ու հաւատքն է որ զանոնք տակաւին կապուած կը պահեն:

Անցնող չորս տարուան ժամանակաշրջանին Սելզոնեանի տալիք հունձքին փոխարէն ի՞նչ ունի հրամցնելիք ՀԲԸՄ-ի այժմու ղեկավարութիւնը: Ըսինք ու հաստատ համոզումով կը կրկնենք թէ սփիւռքի տարածքին գործող մասնաճիւղերու նուիրեալները այս ղեկավարութեան համար չէ որ կ'աշխատին, բայց անոնց նուիրումը, յարգանքն ու աշխատանքը սահման մը ունին: Ժամանակ մը յետոյ այդ ալ կը վերջանայ եւ կը մնայ միս-մինակ ղեկավարութիւն մը առանց հետեւորդի:

Խելացի ղեկավարութիւն մը պարտի հաշուի առնել իր արարքին հետեւանքները, անոնց ներկայի եւ մանաւանդ ապագային առնելիք համեմատութիւններով, եւ հարկ եղած սրբագրութիւնները կատարել, նախքան որ այդ վիճակը անսրբագրելի եւ անհակակշռելի ըլլայ:

Անցնող չորս տարիները Սելզոնեանի տալիք հունձքին տեղը պարապ թողուցին, մինչ այդ ժամանակաշրջանին հարիւրեակ մը հայութեամբ զինուած երիտասարդներ կրնային հասնիլ ու լծուիլ ուսուցչական, լրագրական եւ առհասարակ մեր մշակութային գուպարին: Ազգապահպանումի կենսական այդ գուպարին օժանդակելու համար օգնութեան կանչերը լսելի են բոլոր կողմերէն: Լսել պէտք է զանոնք, առաջին հերթին վերաբանալով Սելզոնեան կրթական հաստատութիւնը: